

## ԳԼՈՒԽ ԺԲ

Ո՛վ անդունդք անսահման.

Ըզքնքուշ մանկութիւն քան մատնել պղծութեան

Չէ՛ր լաւ եւս ի վերա անպաշտպան այդ մահճին

Գերանդեաւ կտրատել գեղանի գայդ մարմին՝

Ձիւնափայլ վիզն առնուլ ոլորել ոսկորներ:

Չէ՛ր լաւ եւս երկաթեայ ձեռնոցով կիր աւեր

Լուսատիպ երեսաց գերթ դիմակ գետեղել.

Քան հայլի ջինջ վտակ արտաքուստ ցուցանել՝

Արտասփիւռ զծաղկունս՝ սըրարշաւ գաստեղունս,

Ի ծոցին ամրարեալ դըժոխոց ժահ ըզթոյնս:

## ԱԼ. ՏԸ ՄԻԻՍԷ

Չաւեն, երբ ելաւ երկրորդ առաւօտուն իւր աղքատիկ բնակարանէն եւ աչքը դարձուց պալատին, ուր էր իւր Արփենին, ապշեցաւ մնաց. թեպէտ առաւօտ էր եւ շատ կանուխ՝ տեսաւ փառաւոր պատգարակներ, կառքեր ու ձիեր լցուցեր էին նաւամատոյցի հրապարակը մինչեւ այդ տան դռները, որոց երկու փեղկերը բաց էին: Եթէ առջի օրուան սպասաւորաց խօսակցութիւնը չլիներ՝ ծեր զինուորը պիտի կարծեր այդ պալատը արքունիքն էր, բայց յայտնի էր իրեն թէ Կ'ոստանդնի սիրուհին լինելով այդ կինը ամենքը մեծ եւ պզտի կը դիմէին նորա պաշտպանութունն մուրալու: Իսկ որ Չաւենի շատ տհաճելի երեւցաւ, այն էր, որ զինուորաց խումբ մը պահպանութիւն կ'ըներ:

Բայց տխուր կամ ուրախ պէտք էր հասներ նպատակին, ուստի մտաւ իւր բնակարանը, հագաւ իւր մաքուր զգեստները եւ խառնուեցաւ կառապանաց, ձիապանաց, պատգարակ կրողաց խումբին մէջ, մտիկ ընելու համար նոցայ խօսակցութիւնը:— Նոյն միջոցին ծեր զօրավար մը բազմաթիւ սպասաւորաց խումբով կը հասներ եւ կը մտնէր ներս, երբ ձիասպասը ձին դուրս հանեց եւ լսեց, որ ծառայքը հայերէն կը խոսէին՝ կենդանութիւն առաւ: Չորս տարուան ժամանակի մէջ երբեմն հայոց հանդիպած էր, բայց շատ քիչ անգամ նոցայ հայերէն խօսիլն լսած, ուստի գաղտնի զուարթութեամբ ուշ կը դներ: Սոքա սպասաւորք էին Թեոդորոս Ելէիզացի հայ զօրավարին, որ Յերակլի հաւատարմաբար ծառայէր էր եւ որ անդրանիկին՝ օրինաւոր ժառանգի իրաւունքը չէր փափագէր ոտնակոխ լինիլ: Ուստի Ծերակոյտի ժողովքին մէջ ամեն ջանք ըրած էր զկոստանդին աթոռ բարձրացնելու համար: Եւ